

Թև Լ՞րր է հիմնվել Ղզլարը, ստույգ տեղեկություններ չկան: Հայտնի է, որ այն եղել է Հյուսիսային Կովկասի ամենահին քաղաքներից մեկը, ավելի հին, քան Մոզդուկը, Գրոդնին, Օրջոնիկիձեն (Վլադիկավկապ), Ստավրոպոլը, Պյատիկորսկը և այլն:

Մինչև բերդի կառուցումը (1735 թ.), Ղզլարը եղել է աննշան մի բնակավայր: Նրա գոյության մասին առաջին հիշատակումը վերաբերում է 1616 թ.: Թերեքի շրջանի ռուսական զորքերի հրամանատար խոխլովի գեկուցադրի մեջ, Ղզլարի մասին կան բազմաթիվ հայկական, ռուսական և կումիկական լեգենդներ ու ավանդություններ:

Կան տվյալներ, որոնք վկայում են, որ Ղզլար ավանում հայեր եղել են դեռ XVII դարում: Դրա առհավատալի է Ղզլարի հայոց ղեկավարանապետ զամբարաններից մեկի վրա փորագրված հայերեն արձանագրությունը՝ Վահագ. 1715 թ., հանդուցյալի անունը չնշված է:

Ղզլար ավանը մինչև 1735 թ. գտնվել է հին Թերեք գետի և «Ղզլար» կոչված գետակի (ներկայումս գոյություն չունի) հանդուցում: Այստեղից անցել է տոնտրուկան ցամաքային մի ճանապարհ, որը Ռուսաստանը կապել է Կովկասի և Արևելքի երկրների հետ: Տեղը նպաստավոր է երկրագործության և խաշնարածության համար: Բնակիչների համար ապահով վայր է, որովհետև XVI դ. վերջում և XVII դ. առաջին կեսին այստեղ եղել է Թերեքի կաղտկային մշտական պահակություն (караул)՝ ճանապարհները հսկելու նպատակով:

Տվյալներ կան, որ Ղզլար ավանի առաջին հիմնադիրները եղել են կումիկները, ռուսները և Միջին Ասիայից եկած տաշկենները: Նրանք զրադվել են անասնապահությամբ, դիմավորապես ոչ խառնարածությամբ և երկրագործությամբ:

Ղզլարը թաթարներն նշանակում է «աղբիկներ»: Ղզլարում բնակվող կումիկները (թաթարական ցեղ) այն անվանում են «Ղզլարկալա»՝ «աղբիկների բերդ», որի մասին արդեն հիշված լեգենդները մենք տալիս ենք համապատասխան լիարժեք:

Ղզլար ավանը, գտնվելով ռուսական սահմանադիրին, պարսկական սահմանին կից, պաշտոնապես Ռուսաստանին հպատակ չէր: Ռուսական իշխանությունը Թերեքի այս շրջանում չափազանց թույլ էր: Ղզլարը առևտրական կապե-

րով կապված էր կումիկական մի քանի նշանավոր առևտրական կենտրոնների հետ, ինչպիսիք էին՝ Թաշնիկու (ներկայումս՝ Աքսայ) և էնդերի (Անդրեևո) գյուղերը:

Պետրոս I-ի սլավոնական արշավանքից հետո, 1723 թ. սեպտեմբերի 12-ին կնքված պայմանագրով Ռուսաստանին անցան մի քանի քաղաքներ՝ Բաքուն, Դերբենդը, Գիլյանը, Մազանդարան և Աստրաքադը, որոնք Ռուսաստանին հնարավորություն էին տալիս ընդարձակելու արտաքին առևտուրը: Պետրոս I-ը բանակցություններ սկսեց Ղարաբաղի հայ մելիքների հետ՝ տեղափոխվելու Ռուսաստան, խոստանալով նրանց մեծ արտոնություններ, ազատ հողեր Թերեքի և Կոյսու (Աուլակ) գետի ափերին և ս. խաչ բերդաքաղաքում: Կոմս Ռումյանցևին ուղղված իր նամակում Պետրոս I-ը գրում է՝ «Մեզ մոտ եկան հայ պատգամավորներ, խնդրելով՝ պաշապանել իրենց թշնամիներից: Նրանց խնդրը մենք չենք կարող կապարել, բայց մենք թույլատրեցինք նրանց բնակվել մեր մերձկասության գավառներում և ավելիք հուսադրող հրամանադիր... Մենք պարտավոր ենք մեր քրիստոնյա եղբայրներին ամեն աջակցություն ցույց ապրել:

Արշավանքից հետո Պետրոս I-ը Տարկիի հնացած ամրության փոխարեն հրամայեց Կոյսու գետի վրա կառուցել նոր ամուր բերդ, որն անվանեց Սուրբ խաչ (ի հիշատակ հին հունական դադութի, որը կոչվում էր Ստավրոպոլիս՝ խաչի քաղաք):


Նոր բերդի կառուցումը ավարտվեց 1724 թ. վականին: Տարկիի ամրոցը կայազարն ու բնակիչներին փոխադրեցին ս. խաչ բերդաքաղաքը: Գաղթած հայերը, վաղցիները և պարսկական թեղիկները կարճ ժամանակում այստեղ շինեցին տունի, խանութներ և քաղաքային տներ: Սակայն 1734 թ., ուսիքն՝ տասն տարի անց, այդ բերդը, նոր քաղաքական դեպքերի պատճառով, նույնպես կորցրեց իր նշանակությունը:

Պարսկաստանում զահ րարձրացավ նապիր շահը, որի օրոք երկիրը շատ ուժեղացավ: 1735 թ., ըստ Գանձակի համաձայնագրի, ռուսական զորքերը հտ քաղվեցին Բաքվից և Դերբենդից:

Նույն թվականին ղեներալ Լեաշովը, մաադրություն ունենալով նոր բերդի համար հարմար տեղ գտնել, մեկնեց Թերեքի շրջանը: Նրա ուշա-

դրույթունը հրավիրեց Ղլլար ավանը: Այսանդ զևո հնուց գոյութիւն ունիին առևտրական հարաբերութիւններ Կովկասի լեռնականների հետ: Հալ վաճառական Սաֆար Վասիլը՝ Պետրոս Առաջինի կարգադրութեամբ, Ղլլարի մոտ կառուցել էր մետաքսի գործարան (1718 թ.), որի շուրջ կարճ ժամանակում խմբվել էր ղզալի թվով բնակչութիւն, մեծ մասամբ հայ դաղթականներից: Ծավալվել էր այգեգործութիւնը, շերամապահութիւնը և բամբակի ու բրնձի մշակութիւնը: Այս ամենը նպաստավոր էին ամրացաշինութեան համար, և արգեն 1735 թ. գարնանը սկսվեց Ղլլարի բերդի կառուցումը, որն ավարտվեց մեկ տարի անց:

Բերդը կառուցվել է ինժեներ գեներալ Ա. Ի. Բիրիկովի (1698—1784) նախագծով: Այն հնդանկյուն կառուցվածք էր՝ բաղկացած հինգ բուրգերից:



2. Ղլլարի բերդի արվագիծը:

րից, երեք մուտքով: Այն շրջապատված էր բարձր պատերով, հողային թմբերով ու ջրով լիքը շրջանաձև խոր խանգակով, որի վրա ձգված կամուրջներն ամեն գիշեր և վտանդի ժամանակ բարձրացվում էին: Արևելքից բերդի համար բնական պատնեշ էր Թերեք գետը: Բերդի ներսում տեղավորված էին կայազորի ղլխավոր պահակաձևերը, բերդին կից՝ ոռոտական եկեղեցին, պարեաի տունը, դրասնյակը, զորանոցը, հրետանային պարկը, բանար, վառոգի նկուղը և աղի ու պարենի խանութները: Վաանգի դեպքում բերդը կարող էր պատասպարել քաղաքի բնակիչներին:

Ներկայումս այդ հսկայական ամրութիւնից ոչինչ չի մնացել, ժամանակի ընթացքում փլվել է, չկա և եկեղեցին: Բերդի անբխտորիայում են զրտնրվում № 1 դպրոցը, հին բաղնիքը, հյուրանոցը, կապի շէնքը: Բերդի հին կառուցվածքներից միակ շէնքը, որ մինչև օրս պահպանվել է՝ պարետի շէնքն է, ուր ապրել ու ծառայել են պատմութեանը

հայտնի անձնավորութիւններ՝ Պուշկինի բարեկամ, բանաստեղծ Կատենինը, գնդապետ Հախվերդովը և ուրիշներ: Այստեղ մի քանի օրով կանգ են առել՝ ֆելզմարշալ Ա. Վ. Սուվորովը, Մ. Յու. Լեւմոնտովը, Բեստուժև-Մաուլինսկին, Մ. Մ. Իվանովը և ուրիշներ: Ներկայումս այդ շէնքում Ղլլարի էլեկտրացանցի դրասնյակն է:

Բերդին ղուդահեո աճում էր նաև ժամանակավորապես երկրամասի առևտրա-արտադրական կենտրոնի դեր սաանձնած նոր քաղաքը, որի ղեկավար մարմիններն էին պարետային և քաղաքացիական դրասնյակները, ուր բոլոր զործերը վճռում էր ղլխավորապես ղինվորական հրամանատարութիւնը՝ բանավոր:

Ղեկավարութեան այս ձևը տեղի ուղիղ 50 տարի, որի ընթացքում շատ իրողութիւններ չըզրանցվեցին: 1786 թ. հունվարի 21-ին հիմնադրվեց Հյուսիսային Կովկասի փոխարքայութիւնը, որի իշխանութեան տակ էին անցնում հինգ գավառներ (Եկատերինոգրադի, Ղլլարի, Մոզդուկի, Սաավրուպուլի, Ալեքսանդրովսկիի դավառները), և Ղլլարը վերածվեց դավառական կենտրոնի:

1736 թ. աշնանը Ս. Խաչ հին բերդը լքվեց: Այնանից ծանրաբեռնված սայլերը ուղևորվեցին դեպի Ղլլար: Բնակչութեան հեա սլստեղ տեղափոխվեցին ոաղմական պարենը, զորքը, Թենդինյան գունդը, որից կաղմվեց բերդի կայազորը, կաղակային հեծելազորը, հետեակ և այլն:

1742 թ. Պետերբուրգում լուր ստացվեց, որ Նադիր շահը մեծ զորքերով մտել է Դաղստան: Աստրախանում, Ղլլարում և Կասպից ծովի վրա սկսեցին շտապ պատրաստութիւններ տեսնել: Սկսվեց ծովային նավատորմի վերանորոգումը, Ղլլարի բերդի ամրացումը: Չնայած պատերազմ չսկսվեց, բայց 1743 թ. փետրվար ամսից մինչև 1747 թ. Նադիր շահի մահը Թերեքի վրա անհանգիստ վիճակ էր:

Ղլլարի բերդը իր ղոյութիւնը պահպանել է 125 տարի անընդհատ, մինչև 1860 թվականը: Այդ ընթացքում այն որպես սահմանապահ բոլր շաա կարևոր դեր է խաղացել ղավթիչների դեմ մղված կռիվներում:

Այսպիսով, 1735 թ. Ղլլարը դարձավ բերդաքաղաք: Վերածվելով թշնամիների հարձակումներից պաշտպանված մի ապահով վայրի, այն իրեն ձգեց ապահովութիւն փնտրող դաղթականութեանը, ուր և 1735 թ. բնակութիւն հաստատեց

150 հայ ընտանիք։ Դադթականներ եկան նաև Ղարարադից, Պարսկաստանից, Հայաստանից, Վրաստանից։

1753 թ. մի խումբ ուգումեցի, սարաղացի և թավրիցի, նաև շրջակա գյուղերի պարսկահայաստան հայեր, չղիմանալով պարսկական ծանր հտրկերին, պալիս ևն էնդելի, իրենց ընտանիքներով (27 ընտանիք)՝ նրանք դիմում են հանգուցյալ Մարգարի որդի, Աստրախանի ընակիչ պ. Հովհաննեսին, որ նա հովանավորի իրենց, տեղավորի Ղլլարում, որպեսդի աշխատեն մեաաքսի գործարանում, ընդլայնեն մեաաքսադործությունը, մշակեն ցուրեն, տորոն, բամբակ, դարդացենն այդեդործությունը և այլն։ Նրանք խնդրում են յուրաքանչյուր ընտանիքին հաակացնել մի դուլդ եղ և սերմացու։ Այդ համաձայնագրով նրանք պարտավորվում են բոլոր տեսակի բերքերի 2/10-ըդր տալ իրեն կամ իր հաջորդներին, իսկ մնացածն էլ ժամանակի զենքով վաճառեն նորից իրեն՝ պ. Հովհաննեսին, միայն այն պայմանով, որ պ. Հովհաննեսը իրենց փոխարեն պատասխանատու լինի պեաակաան առին տեսակի հարկերի համար, իրենց փողով դարձարանի մոտ կառուցել տա եկեղեցի, ուր նրանք կարողանան ազատ կաաարել իրենց լուսավորչական հավատի ծեսերը։ Այդ համաձայնագիրը գրված է ռուսերեն 1753 թ. ապրիլին՝ էնդելիում։ Ներքո ստորագրել են բոլոր ընտանիքների ներկայացուցիչները։

1798—99 թթ. Ղարարադի մեկիքները ընդունում են ռուսական հպաակություն և 11 հաղար ընտանիք Ղարարադից դադթում է Հյուսիսային Կովկաս՝ Ղլլար, Մոզդուկ, Ս. Խաչ, Դերբենգ և մի քանի գյուղեր։ 1817 թ. Պարսկաստանից Ղլլար է գադթում ես 219 ընտանիք, իսկ Բեքեթեյ՝ 153 ընտանիք։ Այսպիսով, աարեր ժամանակներ հայ ընակիչներ են դադթել Ղլլար հետևյալ վայրերից՝ Ղարաբադից, Թիֆլիսից, Գորիից, Աուրամից, Ադուլիսից, Երևանից, Աանահից, Աալմասաից, Թավրիդի շրջանից, Զուդայից, Ղալսարայից, էրզրումից, Նուխուց, Շամտխիից, Բաքվից, Դերբենդից, Մոզդուկից, Աստրախանից, Ն. Նախիջևանից։

Գադթականների առաջին դործերից էին ընակարանաշինությունը, ամրարտականների կառուցումը։ մի քանի լեռնանցքներ լեռնարանակների հարձակումների դեմ անաոիկ դարձնելը և այլն։ Կարճ ժամանակում ծաղկեցին անմշակ հողերը, տարածվեցին պտղաաու և խաղողի այգիները, շերամի համար անհրաժեշտ թթենիները, ցորենի,

րենձի, բամբակի, տորոնի (ներկարույս) և այլ ու այլ կուլտուրաների դաշտերը։ Բացվեցին դործարտներ, արհեստանոցներ, խանութներ։

Դեռևս 1718 թ., Պետրոս I կայսեր հրովարտակով, հայ վաճառական Սաֆար Բարսեղյանը (Վասիլև) իրավունք էր ստացել Ղլլարի մոա, Բերեքի ափին հիմնել մետաքսի գործարան, որը ժամանակի ընթացքում ընդարձակվեց, օրինակ դառնալով հարևան գավառների համար Շնորհիվ հայերի։ այգեգործությունը, դինեգործությունը և շերամապահությունը բավականին դարգացան և մեծ օգուտ տվեցին ռուսական գանձարանին։ Պետրոս Մեծի հաջորդները՝ Եկատերինա I-ը, Եկատերինա II-ը, Պավել I-ը շարունակեցին իրենց նախորդի քաղաքականությունը հայերի նկատմամբ։ Մասնավորապես հայ վաճառականներին տրվում էին մեծ արտոնություններ, որոնց մասին են վկայում կայսերական հրամաններն ու հրովարտականները։

Այսպիսով, XVIII դ. և XIX դ. առաջին կեսին Ղլլարը Հյուսիսային Կովկասի ռազմավարական, անաեսական և մշակութային կենտրոններից մեկն էր։ Այնտեղով էին իրականացվում գիվանադիական հարարերությունները Արևելքի և կովկասյան երկրների հետ։ Բացի այդ, Ղլլարը Ռուսաստանի հարավային սահմանադիր նշանակալի ամրություն էր թուրք-պարսկական հարձակումների դեմ։

Առավել մեծ էր Ղլլարի առևարական նշանակությունը։ Արևելյան ապրանքների (Հնդկաստանից և Պարսկաստանից) առևաուրը Ռուսաստանի հետ կատարվում էր Ղլլարի և Ասարախանի վրայով։ Այս դործում մեծ ակտիվություն էին ցուցաբերում հաակապես հայ և պարսիկ վաճառականները։

Ղլլարի շուկան, որ այն ժամանակ հայանի էր ամրոզը Կովկասում, իրեն էր ձգում օաարերկրյա շատ վաճառականների Հայաստանից, Վրաստանից, Դադստանից, Միջին Ասիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից և այլ վայրերից։ Շուկա էր հանվում նաև Կովկասի լեռնականների զրեթե ողջ ապրանքը։ Իրար հեակից անընդհա եկող քարտվանները փոխանակում էին տնայադործական դորդեր, խսիրներ, լափնջիներ, դործվածքներ, անասուններ, որոնց դիմաց տանում էին

¹ Հայ վաճառականներից շատերը մտնում էին պարսկական առևարական մի ընկերության մեջ, որ հիմնվել էր Աստրախանում 1755 թ.։

իրենց անհրաժեշտ ատորանքներ՝ մետաքս, երկաթեղեն, ամանեղեն, օճառ և այլն:

XIX դ. սկզբին Ղզլարում արդեն գործում էին մի քանի գործարաններ՝ հրկու մեծաքսադործական, 11 սեկի և կաշվի, օրկու ներկի, մեկ օճառի և 46 օղու գործարաններ: Կային նաև ոսկերչական և անագապատման արհեստանոցներ: Հատկապես մետաքսագործության մեջ Ռուսաստանում Ղզլարը մինչև XIX դ. կեսը նշանակալի տեղ էր գրավում: Ղզլարի շուկան հանվող հիմնական ապրանք-

ներն էին՝ դինին, օդին, մետաքսը, բրինձը, անասունները, կաշին, յուղը, քնջութը, տորոնը, կապարը, մեղրը, միրգը, ձկնեղենը (րալիկ), խավիտը և այլն: Հատկապես եկամտաբեր էին դինին ու օդին:

Ղզլարը, որպես առևտրական կենտրոն, իր նշանակությունը պահեց մինչև XIX դ. կեսերը, որից հետո ավելի նշանակալի դարձան Գրոզնին, Վլադիկովկազը (Օրջոնիկիձե), Պյատիգորսկը, ուր երկաթուղին ավելի շուտ մուտք գործեց:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ղզլարի հայերի առաջին մտահոգությունները էր հողերի սոռոգման, ջրատար ցանց ստեղծելու հարցը, որի առթիվ հրավիրված ընդհանուր ժողովը որոշեց Թերեքից մի մեծ ջրանցք անցկացնել և դա ճյուղավորել այնպես, որ յուրաքանչյուր այգի ունենա իր առուն: Կառավարությունն ընդառաջեց ղզլարցիներին, պետական դանձարանից րաց թողնվեց որոշ զույմար այդ աշխատանքների համար:

Քանի որ Թերեքի մակերեսը քաղաքի մակերեսից բարձր է, ուստի հեշտությամբ վճռվեց այն հարցը, թե ինչ ուղղությամբ պիտի տարածվեն այգիներն ու արոտավայրերը, փորվեին ջրանցքներն ու առուները: Այգիներ տնկվեցին Թերեքի գետալից անմիջապես դեպի հյուսիս և հյուսիսարևմուտք, ուր հողն էլ միանգամայն համապատասխանում էր այգեգործությանը: Հետագայում այգիների գոտին Ղզլարի շուրջը գնալով ընդարձակվեց:

Նոր առուներ փորելու, հները նորոգելու և դրանց օգտագործումը կանոնավորելու աշխատանքներում սիրով օգնության էին հասնում հարեան ալլագգի այգեգործները, երբմե կիսելով նույնիսկ աշխատանքի ծախսը: Բարեկամական նման հարաբերություններ հաստատվեցին հստակապես մանր այգետերերի միջև, որոնց շահերն ու նպատակները իրագործելի էին միայն միասնարար հանդես գալու դեպքում: Խոշոր այգետերերը (կալվածաատերերը) կախում չունենալով մանր այգետերերից ջատ հաճախ իրենք էին թելադրում նրանց Խմասալիս (րերքի) արժեքը ընթացիկ տարվա համար, հարստահարում էին նրանց, էժան գներով գնում բերքը կամ շիրան,

որը իրենց մատաններում մշակելուց հետո, արտահանում էին Ռուսաստանի քաղաքները՝ կրկնակի ու եռակի դներով:

Երկրագործություն: Ղզլարի հայերը, ի տարբերություն այգեգործության, զխավորապես խաղողագործության, ավելի քիչ էին զբաղված դաշտամշակությամբ: Ավելորդ հող և ժամանակ դրա համար գրեթե չկար: Մեկ այդին հագիվ լինել մեկ կամ երկու դեսյատին: Այդ ասարածությունը նրա տերը պիտի ռաժաներ մի քանի մասերի՝ խաղողի (մեծ մասը), պտղատու ծառերի, րանջարանոցի և րակի, սւր դտնվում էին իր փոքրիկ ընկալաւնր և ամրարը: Իսկ չքավոր այգեգործը նույնիսկ այդ ընկալաւնն էլ չունել, ալ շինում էր վրանի պես մի րան, ուր կարելի լինել քնել և քամուց ու անձրեւից պաշտպանվել, և ամրար, որտեղ պահվում էին այգեգործական գանաղան իրեր ու գործիքները: 2—3 մ երկարությամբ և 1—1/2 մ լայնությամբ հասարակ տներ ու ամրարներ, որոնք ծեփվում էին կավախառն գոմաղրով: Տանիքը շինում էին թեք և ծեփում հարդախառն ցեխով:

Ջրավոր այգեատերերը աշխատանքում՝ մեծ կարիք ունեին օգնականների և, քանի որ մշակներ վարձելու հնարավորություն չունեին, գործի էին դնում իրենց ընտանիքի բոլոր անդամներին: Գյուգատնտեսական գործիքները, որոնք անհրաժեշտ էին այդում, ձեռք էին բերվում քաղաքում: Դրանք կարելի էր գնել շուկայում կամ պատվիրել մասնավոր արհեստանոցում, դարբնոցում:

Գործածվող Երկրագործական գործիքները նույնն էին, ինչ հարեան աղագրին՝ ուսուններին ու կաղակներին: Ընդունված գործիքներն էին՝ արորը, որին հաջորդեց երկաթյա դուրանը,